

ԱՆՅՅԱԼ ԿԱՏԱՐՅԱԼԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. Մ. ԱՆԹՈՍՅԱՆ

Ըստ Մ. Աբեղյանի՝ «Անցյալ կատարյալը ցույց է տալիս առանց տեղափոխության մի սոսկ գործողություն, որ սկսվում և միանգամից կատարվում, վերջանում է անցյալ ժամանակակետում» (ՄԱՀԼՏ, էջ 562)։

Հայերենի բոլոր դրսևորումներում էլ անցյալ կատարյալի բայաձևերը ժամանակային կայուն կիրառություններ ունեն, ինչպես՝ «Եւ ես Յովհաննէս լուայ եւ տեսի զայս ամենայն. եւ յորժամ լուայ եւ տեսի, անկայ եւ երկիր պաղի» (Յայտն., ԻԲ 8)։

Անցյալ կատարյալը մեր լեզվի բոլոր դրսևորումներում՝ և զրաբարում ու միջին հայերենում, և արևելահայ ու արևմտահայ զրականներում, ինչպես նաև ընդհանուր առմամբ բարբառներում կիրառական այս իմաստն ունի։ Մյուս կողմից՝ անցյալ կատարյալը մեր հին լեզվի միակ ժամանակն է, որ դարերի ընթացքում նվազագույն չափով է փոփոխությունների ենթարկվել։ Այս իմաստով հրամայականի միայն առանձին ձևեր կարող են հավասարվել դրան։

Ըստ համեմատաբանների, հնդեվրոպական նախալեզուն ավելի կարելի էր համարում զանազանել գործողության տևողության կամ կատարման կերպը, քան ժամանակը։ Հնդեվրոպական նախալեզվի այդ հատկությունը պատմա-համեմատական լեզվաբանության մեջ անվանված է aspect, որն (կճառյալը) թարգմանում է երևույթ։ Նշենք նաև, որ aspect-ի արտահայտությունը միայն հնիս. հատուկ չէ, այլ կա աշխարհի բազում լեզուների մեջ։

Կճառյալը լատիներենի հիմքի վրա առաջացած եվրոպական նոր լեզուներում այս դրսևորումների քննությամբ ցույց է տալիս, թե ինչպես՝ ինչքան զալիս ենք դեպի մեր ժամանակները, երևույթը կորցնում է իր կարևորությունը, և նրա տեղ ժամանակի կարևորությունն է բարձրանում (ՀԱԼՔ, հ. IV և, էջ 60—62)։

Անցյալ կատարյալը մեր հին լեզվի մեջ միակերպ արտահայտություն չունի. դրաբարի 4 խոնարհումների պարզ և ածանցավոր ձևերում անցյալ կատարյալը տարբեր արտահայտություններ ունի։ Միակերպ և կայուն դրսևորում չունի նաև կրավորականի իմաստը անցյալ կատարյալում, ահա ինչու առավել նպատակահարմար է անցյալ կատարյալի պատմական փոփոխությունների քննությունը կատարել ըստ առանձին խոնարհումների։

ա) և խոնարհման բայերում անցյալ կատարյալի դրսևորումները զրաբարում միակերպ և հետևողական են, այն է՝ ներգործական սեռի՝ և՛ պարզ,

1 Չնայած սեռի բայերի դրսևորումները զրաբարում կարելի է բնութագրել նետնյալ կերպ. եթե բայի տվյալ ժամանակը ունի և՛ ներգործական, և՛ կրավորական դրսևորումներ, ապա շեղոր սեռի բայերը միշտ ներգործական են խոնարհվում, ինչպես՝ սիրեմ-սիրիմ, -լալեմ սիրեցի-սիրեցայ, -լալեցի

և՛ ածանցավոր բայերը ներգործածե խոնարհվելիս ստանում են -ի, -եւ, - , -աւ, -լւ, -ին, իսկ կրավորաձե խոնարհվելիս՝ -ալ, -աւ, -աւ, -աւ, -ալ, -աւ, -աւ վերջավորությունները, որոնք դրվում են անցյալի հիմքի վրա, ընդ որում և խոնարհման պարզ բայերն ունեն -ց բաղադրիչով վերջավորություն (գրել- գրեաց), իսկ ածանցավոր բայերը՝ արմատական կամ հիմք-վերջավորու- թյուն (արկանել-արկ):

Եւ խոնարհման պարզ բայերը և՛ միջին հայերենում, և՛ մեր գրական լեզվի նրկու: հատվածներում, այլև բարբառներում, պահպանել են գրաբարյան խոնարհման այս ձևերը: Ավելին. գրաբարյան խոնարհման համակարգի կրած փոփոխություններին համեմատ, այլ խոնարհումներին՝ և պարզ խո- նարհման տակ անցած բայերը ևս որդեգրեցին այդ դրսևորումները: Սակայն բոլորովին տարբեր բախտ ունեցավ և՛ ածանցավոր խոնարհումը. գրաբարի կերպ-սեռային խոնարհման ըմբռնման թուլացմանը համապատասխան -աւ, -աւ, -աւ, -աւ, -ալ, -աւ, -աւ վերջավորությունները զրկվեցին կրավորա- կան դրսևորելու իմաստից և վերաձեցին ն սոսկածանցավոր բայերի անց- յալ կատարյալի վերջավորություններին: Այսպես՝ դեռ միջին հայերենի առա- ջին շրջանում ունենք «Երբ տեսալ (=տեսա) որ կու ձախէր, դալոց իրք ալ առի գերիս» (ՖՐԴ, էջ 265): «Ես երկու դաշտ տեսալ (=տեսա)» (ՆՇԲԶ, էջ 573) և այլն: Կրավորական արտահայտելու իմաստից ազատվելով՝ այդ վերջավորությունները բնականաբար սկսեցին դրվել նաև շեղոր սեռի բայե- րի վրա, ինչպես՝ «Ապա թէ տեսանէ զչերմանն ժամանակն՝ որ անցաւ (ՄՀԶՄ, էջ 139):

«Դանակ առ զմորթն շրջէ:

Ի՛նչ է՛՛ ելաւ (—ելավ) միսն ի բանէ (ՆՇԲԶ, էջ 571): Այսպես նաև՝ «ելաւ» (ՍԳԴ, էջ 76, —ձե, էջ 158), «հասաւ» (ՄՀԶՄ, էջ 139), «իջաւ» (ԳԲ, էջ 7, — ՅՐԴ, էջ 269, 352) և այլն:

Գրաբարի և խոնարհման ածանցավոր բայերը աշխարհաբարում դարձան ն սոսկածանցավոր բայեր, որոնցից, ըստ Հ. Բարսեղյանի, արդի հայերենում պահպանել են անցնել, գտնել, ելնել, իջնել, հասնել, հաւնել, մտնել, տեսնել (ՀԲԱՀԵՏ, էջ 382): Սրանց հարել են նաև գրաբարում այլևայլ խոնարհումների պատկանող բայեր, ինչպես՝ բուսնել, մեռնել, դիպնել և այլն, ինչպես նաև նորակազմ բայեր: Իսկ Հ. Գաղանճյանը բնորոշում է գտնել, մտնել, իջնել, հեծնել (ՀԳՆԲԱՀ, էջ 195): Տեսնել բայն առանձնացնում է, ըստ երևույթին, հրամայական եզակիի տե՛ս ձևի պատճառով, մինչդեռ վերևիններն ունեն գտի՛ր, մտի՛ր, իջի՛ր, հեծի՛ր ձևերը: Հ. Գաղանճյանը զարտուղի է համարում նաև առնել, քննել, պազնել, խածնել բայերը, որոնք անցյալ կատարյալում ունեն -ի, -իւ, -ավ, -ին, -իւ, -ին վերջավորությունները (առի. առիւ, ա- ռավ, առին, առիւ, առին):

Արևմտահայ քերականները գրաբարի և խոնարհման ածանցավոր բա- յերը անցյալ կատարյալի նման կազմությունների պատճառով «զարտուղի» են համարում. «Կան նել (գտնել, տեսնել, մտնել—Ս. Ա.), նիլ, նալ վերջա- վորությամբ բայեր՝ որ շորրորդ լծորդության պես կը խոնարհին. միայն ան- կանոն ժամանակներուն մեջ ն գիրը ցոյի փոխելու տեղ՝ դուրս կը թողուն»,—

Իսկ եթե խոնարհումը կամ տվյալ ժամանակը միայն կրավորաձե դրսևորում ունի, ապա շե- ղոր սեռի բայն էլ կրավորաձե է խոնարհվում. ինչպես՝ կամիմ, կամեցայ—հայիմ, հայեցայ:

գրում է Ա. Այտրեյանը (ԱԱՔՔ, էջ 63): Այդպես է վարվում նաև Հ. Գալանճյանը:

Բ) Գրաբարում Խ խոնարհման և՛ պարզ, և՛ ածանցավոր բայերը միայն կրավորաձև զրսեորում ունենին: Ներդործական սեռի բայերը, նայած կիրառության, կարող էին արտահայտել և՛ ներգործական, և՛ կրավորական սեռի իմաստ: Հասկանալի է, որ զրսեորման այլ հնարավորություն չունենալով՝ այս խոնարհման շեղոք սեռի բայերը կրավորական ձևի մեջ արտահայտում էին շեղոք սեռի իմաստ:

Միջին հայերենում գրաբարի Խ խոնարհումը ղեռ պահպանված է. ինչպես՝ «Յուստիանոս կայսրն կամեցաւ յիւր աւուրքն» (ՍԳԴ, էջ 39): «Բայց տեսնուլ պիտի, թէ ի՞նչ ցեղ էր յուղարկելն, ի՞նքն յօժարեցաւ ի զնալն, թէ ի կահրա յուղարկուեցաւ...» (ն. տ., էջ 73) և այլն:

Միայն պետք է նշել, որ կրավորական նոր ձևի որդեգրումով այս խոնարհման կրավորականի իմաստը ևս արտահայտվում է ու՝ մասնիկով:

Խ խոնարհումը պահպանվեց նաև արևմտահայ դրականում. արևմտահայ քերականները Խ խոնարհումն բնորոշում են որպես առանձին, 2-րդ խոնարհում. «Բ. լծորդություն կը համարվին այն բայերը, որոնց աներևույթը կը վերջավորի Խ լծորդով, ինչպես՝ խոսիլ, հասնիլ, քոչիլ» (ՀԳՆՔԱՀ, էջ 182):

Արևմտահայ գրականում Խ լծորդության տակ մտնում են ինչպես գրաբարի Խ խոնարհման բայերը (ապրիլ, խօսիլ, հանիլ, նայիլ), այնպես էլ Խ խոնարհման շեղոք և Վ կրավորական մասնիկով բայերը:

Արևելահայ գրականում ևս մինչև անցյալ դարի վերջերը Խ խոնարհումը արժեքավորվում էր անցյալ կատարյալի իր վերջավորություններով: Այսպես, Բաֆֆու «Սամվել» վեպում ունենք ծագեցան (Բ, էջ 248), պատահեցան (ն. տ., էջ 421), հոգնեցավ (ն. տ., էջ 204), մյուս կողմից՝ բաժանվեցան (ն. տ., էջ 243), կրկնվեցավ (ն. տ., էջ 246), բացվեցավ (ն. տ., էջ 247), շփոթվեցավ (ն. տ., էջ 247) և այլն: Սակայն և՛ սկսեցին (ն. տ., էջ 215):

Հ. Թումանյանը նույնպես ունի մոլորվեցավ (ՀԹ, էջ 56), հալեցավ (ն. տ., էջ 99) ձևերը:

Հետագայում Խ խոնարհումը առանձին գրողներ բնորոշում և օգտագործում են, իսկ մյուսները՝ ոչ: Այսպես օրինակ՝ Մուրացանը «Գեորգ Մարգարտունի» վեպում ունի սկսավ (Մ, էջ 18), կոչվեցավ (ն. տ., էջ 7), շփոթվեցավ (ն. տ., էջ 12), ննչվեցավ (ն. տ., էջ 12), բաժնվեցան (ն. տ., էջ 12), շարժվեցավ (ն. տ., էջ 14), գրավվեցավ (ն. տ., էջ 14), ուղղվեցավ (ն. տ., էջ 17), երևեցավ (ն. տ., էջ 22) և այլն: Սակայն և՛ ծնվեց (ն. տ., էջ 14), խանդավեց (ն. տ., էջ 23), ալլալվեց (ն. տ., էջ 40) և այլն:

Ալ. Շիրվանզադեի «Արտիստը» վիպակում Խ խոնարհման անցյալ կատարյալի վերին ձևերը չեն հանդիպում, այլ՝ բնդհալվեցին (Շ, էջ 353), վիրավորվեց (ն. տ., էջ 353), գրգռվեց (ն. տ., էջ 354), բնկղմվեց (ն. տ., էջ 402) և այլն: Այդպես նաև Վ. Տերյանի ամբողջ շափածություն ունենք և՛ պարզ խոնարհման անցյալ կատարյալի վերջավորությունները, ինչպես՝ հալանվեցիր (ՎՏ, էջ 10), անջառվեցին (ն. տ., էջ 11), փակվեցին, բացվեցին (ն. տ., էջ 5), նայեցիր (ն. տ., էջ 20), աղբեց (ն. տ., էջ 21), ծավալվեց, փոխվեց (ն. տ., էջ 127), ծուլվեցին (ն. տ., էջ 49), փսվեց (ն. տ., էջ 143), մոլորվեց (ն. տ., էջ 201):

Այսպիսով, դարասկզբին արդեն արևելահայ գրականում գրաբարի և խոնարհման, ինչպես նաև վճարային լեզվի կրավորական կամ շեղոք բոլոր բայերը անցնում են և պարզ խոնարհման բայերի տակ՝ մեծապես թեթևացնելով արևելահայ գրականի խոնարհումը:

Ինչ վերաբերում է գրաբարի և խոնարհման ածանցավոր բայերին, ապա ե՛ր միջին հայերենում, ե՛ր մեր գրական լեզվի երկու հատվածներում նրանք անցյալ կատարյալում պահեցին իրենց գրաբարյան խոնարհման «կրավորա-ձևությունը»: Արևելահայ գրականում պահված են բուսնիլ-բուսա, հագնիլ-հագա, հեծնիլ-հեծա, մեռնիլ-մեռա, պրծնիլ-պրծա. Իսկ արևմտահայ գրականում պահպանվել են մեռնիլ-մեռալ, բուսնիլ-բուսալ, հագնիլ-հագալ, որոնք դեպի իրենց են ձգել նաև գրաբարի և խոնարհման ածանցավոր մի քանի բայեր. հասնիլ-հասալ (գրբ. հասանել), անցնիլ-անցալ (գրբ. անցանել):

Սրանց անցյալ կատարյալի կազմությունը արևելահայ գրականի հետ նույնն է:

Գրաբարում և խոնարհման ածանցավոր բայերը զբաղեցրել են նաև չ, նչ մասնիկներով, ինչպես՝ բոչել, փախչել, հանգչել, մատչել, երկնչել, կորնչել, մաբունչել, լարնչել և այլն: Սրանք գրաբարում անցյալի հիմքում այսպես կոչված ի թույլ բաղադրիչ ունեին, որը -ալ, -աւ, -աւ... կրավորաձև վերջավորություններից առաջ գրաբարի հնչյունական օրենքով վեր էր ածվում ե-ի (փախչիւմ-փախ-+ի-փախի +ալ > փախեալ):

Միջին հայերենի շրջանում իբրև հնաբանություն խոնարհման այս ձևվերը տեղ-տեղ գեո պահվում են, ինչպես՝ հանգեալ (ԴՔ, էջ 106), բազեալ (ՀԵ, էջ 210), կոբեան (ՎԱԱ, էջ 124) և այլն: Սակայն միջին հայերենի համար բնորոշը ի թույլ բաղադրիչի կորուստն է, ինչպես՝ «Եհար ժանաբն զինձն և զերկուս բաժին կտրեաց և զաղբքսն ի վայր թափեցաւ և փախաւ» (ՎԱԱ, էջ 4): «Ի ժամ կոխելոյն զհնձանն զանակ մի կուրաւ ի մէջ խաղողին» (ն. տ., էջ 203) և այլն:

Միջին հայերենի երկրորդ շրջանում երևույթը գրեթե ամբողջացած է, ինչպես՝ փախաւ (ՄՂ, էջ 95), բուա (ԱԱԱԱ, էջ 5), կուա (ՁԱԹ, էջ 161) և այլն:

Բարբառներում և մեր գրական լեզվի երկու հատվածներում գրաբարի չ, նչ սոսկածանցավոր բայերը հետևում են և խոնարհման ածանցավոր բայերի խոնարհմանը: Արևելահայ գրականում ըստ Հ. Բարսեղյանի ունենք ընդամենը 15 բայ. բոլորն էլ շեղոք սեռի. գրանք են՝ բլչել, դիպչել, բազչել, բոչել, խրբչել, կորչել, կպչել, հանգչել, սառչել, ուռչել, փախչել, փակչել, փլչել (ՀԲԱՀԽՏ, էջ 383):

Արևմտահայ գրականում ևս բոչիլ, փլչիլ, դպչիլ, փախչիլ, փակչիլ, կպչիլ խոնարհվում են արևելահայ գրականի չ ածանց ունեցող բայերի նման, մինչդեռ «չիլ վերջավորող մյուս բայերը՝ հանգչիլ, կառչիլ, խառչիլ, մաբ-տրնչիլ և այլն, կանոնավոր են և անոնց չ միջաժանցը՝ բայի բունին իբրև անբաժան մասը, կը մնա բոլոր ժամանակներուն մեջ ալ» (ՀԳՆՔԱՀ, էջ 197): Բացառությամբ հանգչել բայի, արևելահայ գրականում ևս մյուս բայերը և պարզ խոնարհման են պատկանում: Մյուս կողմից՝ արևմտահայ գրականում նստիլ, սկսիլ, փրբիլ, ծնիլ, պրծիլ անցյալ կատարյալում ածանցավոր

բայերի նման արմատական հիմք են ունենում (նստալ, սկսալ և այլն), նստել զրաբարում ևս անցյալի հիմքում արմատական ձև ուներ. մնացած 4 բայերը արևմտահայ դրականում թեև կորցրել են իրենց ան ածանցը, սակայն պահում են անցյալի հիմքի իրենց զրաբարյան կազմությունները, ինչպես՝ սկսանիմ-սկս-սկսալ, վերանիմ-վեր-վերալ, ծնանիմ-ծն-ծնալ, պրծանիմ-պրծ-պրծալ:

դ) Գրաբարում Ա խոնարհման բայերն ունեն և՛ պարզ, և՛ ածանցավոր ձևեր, ինչպես՝ աղալ, գրալ, զողանալ, զարմանալ. Ի տարբերություն մյուս խոնարհումների, զրաբարի Ա խոնարհման ածանցավոր բայերը ևս անցյալ կատարյալում ց բաղադրիչով հիմք ունեն (դարմանալ-դարմաց-զարմացալ): Ա խոնարհման պարզ ձևերում կրավորաձև խոնարհում ունենք, սակայն ածանցավոր ձևերում ներդործաձև-կրավորաձև խոնարհման հակադրություն չունենք. զրաբարում Ա խոնարհման ածանցավոր բայերը, անկախ սեռից, «կրավորաձև» վերջավորություններ ունեն, ինչպես՝ զողացալ, զողացաւ..., բայց և՛ զարմացալ, զարմացաւ և այլն:

Իրաբարյուն խոնարհման այս ձևերը պահպանվեցին և միջին հայերենում. ինչպես՝ «Զվաներն աշխարհական պարոնայք հոգացին» (ՍԳԴ, էջ 34): «...Զիս Աստուած դաւանեցիր և հաւատացիր» (ՎԱԱ, էջ 146) և այլն: Կրավորականի նոր դրսևորմանը համապատասխան, միջին հայերենում Ա խոնարհման պարզ բայերի զրաբարյան կրավորաձև դրսևորումները զաղարեցին դործածվելուց: Ա խոնարհման ածանցավոր ձևերը, ինչպես վերևում ասվեց, զրաբարում միաձև դրսևորում ունեին, որ և պահվեց միջին հայերենում՝ հնչյունական մասնակի փոփոխություններով, ինչպես՝ «Ապա երբ ուժվորեցին պարսկեր ի վերայ Հայոց, նա տանէին զերիցնին ի հեծել և այնկից ի վեր յուզցաւ» (ՍԳԴ, էջ 34): «Ասացի... թէ ինձ համար է այս խորովուս և զիս մոռցան» (ՎԱԱ, էջ 191) և այլն:

Սեր զրական լեզվի երկու հատվածներում էլ զրաբարի Ա խոնարհման բայերը հանդես են գալիս որպես առանձին խոնարհում՝ զրաբարյան իրենց վերջավորությունների պահպանմամբ: Արևելահայ զրականում Ա խոնարհման ան. են ածանց ունեցող բայերը ըստ անորոշ զերբալի վերջավորության մտցվում են 2-րդ խոնարհման տակ, սակայն որպես առանձին խումբ, քանի որ այս բայերի անցյալի հիմքն, ու նրանից կազմվող ձևերը Ա խոնարհման պարզ բայերի համեմատությամբ չգալի տարբերություններ ունեն. այսպես, մինչդեռ պարզերի անցյալի հիմքը կազմվում է անորոշի ի վերջավորությունը զ-ի փոխելով (աղալ-աղաց, կարդալ-կարդաց), ածանցավոր բայերի անցյալի հիմքը կազմվում է անորոշի ալ վերջավորության անկումով և բայահիմքի -ան, -են վերջավորությունների ն>ց հերթադարձությամբ, ինչպես՝ զարմանալ-զարման-զարմաց

մեռանալ-մեռան-մեռանց

Արդի հայերենում ևս Ա խոնարհման պարզ բայերն ունենում են -ի, -իր... վերջավորությունները (կարդացի, կարդացիր... կարդացին), մինչդեռ ածանցավոր բայերը՝ -ա, -աւ, -ալ... վերջավորությունները (զարմացա, զարմացաւ, --մեռանցա, մեռանցաւ):

Լիակատ ածանցավոր բայի անցյալ կատարյալը լինում է լվացի, լվացիր, լվաց... ըստ երևույթին, փոխարինվելով լվալ բայի համապատասխան ձև-

վերով: Պետք է ենթադրել, որ բացի, բացիր, բացեց... բացին, բանալ բայի ձևեր են, բանի որ բացել ունի բացեցի, բացեցիր... ձևերը: Արևմտահայ գրականում եղակի 3-րդ զեմքն ունի բացավ. Բառնալ, դառնալ բայերն անցյալի հիմքից կազմվող ձևերում թեև կանոնավոր են խոնարհվում (բառնա..., դառնա...), սակայն $\text{ց} > \text{օ}$ հերթագայություններ, որ, անշուշտ, և հնչյունի պատճառով է տեղի ունեցել:

Վեր կենալ հարադրական բայը անցյալ կատարյալում ունի վեր կացա, վեր կացաւ, վեր կացաւ, վեր կացան... ձևերը:

Ըստ Հ. Բարսեղյանի հաշվումների, արդի հայերենում ան ածանց ունեցող բայերի թիվը 750-ից ավելի է: Սակայն այս հաշվումները մոտավոր են, որովհետև ցանկացած պահին զանազան խոսքի մասերից համապատասխան բայական վերջավորություններով կարելի է նոր բայեր կազմել և ավելացնել եղած քանակը» (ՀԻԱՀԽՏ, էջ 296): Սինչդեռ եմ ածանց ունեցողները մոտ 2 տասնյակ են:

Արևմտահայ գրականում ես Ա խոնարհման թե՛ պարզ և թե՛ ածանցավոր բայերը պահում են գրաբարյան խոնարհման ձևերը. ինչպես՝ կարգալկարդացի, կարդացիր, դարմանալ-զարմացա, զարմացար... վախենալ > վախնալ-վախցա, վախցար... և այլն:

Կենալ, կրնալ բայերը ես ենթարկվում են Ա ածանցավոր խոնարհման՝ կեցա, -ար, -ավ, կրցա, -ար, -ավ:

դ) Դրաբարում Ա խոնարհումն ունի և՛ պարզ, և՛ ածանցավոր գրսեորումներ: Ի տարբերություն նախորդ երեք խոնարհումների պարզ բայերի, Ա խոնարհման պարզ բայերն անցյալի հիմքում արմատական էն, ինչպես՝ հեղուկ-նեղ, քողով-քող և այլն: Թեև Ա ածանցավոր բայերը անցյալ կատարյալում ներգործածե-կրավորածե տարբերակված կիրառություններ չունեն (ջնոնուլ-ջնուլ «տաքացայ»), սակայն պարզ բայերն ունեն (հմտ. կիզուլ-կիզի «աչրեցի», կիզուլ «աչրվեցի»:

Միջին հայերենում Ա խոնարհման ածանցավոր բայերն ունեն գրաբարյան գրսեորումներ, ինչպես՝ «նու յործամ ջեռալ (= տաքացավ), պատեցալ դմջով լծվարին» (ՎԱԱ, էջ 154):

Թեև պարզ բայերը ես գրաբարյան գրսեորումներով օգտագործվում են, սակայն նրանց կրավորականն արտահայտվում է վ-ով, ինչպես՝ «Բնալ չկարէ ամուսնանալ ոչ այն, որ երով (= թողեց) և ոչ այն, որ քովալ (= թողնվեց)» (ՈԳԴ, էջ 39):

Միջին հայերենի շրջանից սկսած նկատելի է, որ Ա խոնարհման պարզ բայերի գրաբարյան կիրառությունները թուլանում են: Դրան հակառակ, աշխուժանում են ածանցավոր ձևերը: Աշխարհաբարի շրջանում Ա խոնարհման շատ քիչ բայեր էին օգտագործվում: Արևելահայ գրականում Ա խոնարհման բայերն իսպառ վերացել են. պահված է միայն աւանուլ տալ հարադրության մեջ մեկ բայ, որը, սակայն, որպես հարադրության 1-ին բաղադրիչ չի խոնարհվում: Սակայն այդպես չէ արևմտահայ գրականում: Ա. Այսրեյանը վկայում է քողով-քողի կամ քողուցի, երդնուլ-երդուալ, զրօսնուլ-զրօսալ, քնքնոնուլ-քնքնեցալ, գգննուլ-գգեցալ ձևերը՝ վերջինները, ց ունենալու պատճառով, զնելով 4-րդ լծորդության -նալ վերջավորվող բայերի հետ

(ԱԱԲԲ, էջ 59, 65): Հ. Գաղանձյանը միայն թողույ բայն է ընդունում՝ անցյալ կատարյալի համար հետևյալ ձևերը նշելով: թողուցի, թողուցիւ, թողուց, թուլուցինի, թողուցինի, թողուցին (ՀԳՆՔԱՀ, էջ 198): Եվ իրոք, արևմտահայ գրողների մոտ թեև այլևայլ ձևերով մի խոնարհման այլ բայեր ևս հանդիպում են, սակայն անցյալ կատարյալում հետևողական է թողույ բայը, ինչպես՝ «Քաղերին պառիվայր տուները հեռվեն թավալղոր կործանումի մը տույափորությունը թողուցինի իր վրա» (ԳԶ, էջ 99): Այսպես նաև՝ թողուցի (ն. տ., էջ 161), շրուլուց (ն. տ., էջ 166): Այս ձևերը կիրառվում են նաև այսօրվա արևմտահայերենում, ինչպես՝

Ճառերե ևտը ճամարտակ,
նրբ թողուցին մեղ մինակ (ՎՎԼԲ, էջ 116):
Հերիք ապրիլն օրենքներով
զորս թողուցին Աղամ—Եվան (ն. տ., էջ 136):

Արզի հայերենում թողնել բայն անցյալ կատարյալում կրկնակ ձևեր ունի՝ թողեցի, թողեցիւ, թողեց.... այլև՝ թողի, թողիւ, թողեց, թողինի, թողին: Վերջին ձևերն էին օգտագործում նաև XIX դարի արևելահայ գրողները. «Դու հեռավոր օտար մարդկանց սիրտը տվիր ու ինձ թողիր» (ՎՏ, էջ 417): Այսպես նաև՝ թողի (ն. տ., էջ 35, 141) և այլն:

Առանձին հետաքրքրություն են ներկայացնում նաև պատճառական բայերի անցյալ կատարյալի կազմության փոփոխությունները: Գրաբարում պատճառականի անցյալի հիմքն ունի -ույց վերջավորություն (վազեցույց, ուսույց, մատույց և այլն): Հետևելով և խոնարհման ածանցավոր բայերի օրինակին՝ որպես ներգործական սեռի բայ, պատճառականները գրաբարում խոնարհվում են և՛ ներգործածե (-ի, -եւ, -աւ, -լի, -իւ), -ին վերջավորություններ ստանալով), և՛ կրավորածե (-աւ, -աււ, -աւլ, -աւ, -ալի, -ալիւ վերջավորություններ ստանալով):

Միջին հայերենի առաջին շրջանում պատճառականի գրաբարյան ներգործածե կազմությունները բավականին անարատ են, ինչպես՝ «Հազար ձի վազան բերի, վազցուցի և այլ ոչ հասուցի» (ՀԵ, էջ 156):

«Նա իր բարբառն ահեղ զարհուրեցուց զիս» (ԿԵ, էջ 189): Եվ կամ՝ «Եւ հուսնեցուց զամենն ի բանս, զոր արար...» (ՍԳՐ, էջ 40): Մինչդեռ միջին հայերենի 2-րդ շրջանում (XV—XVII դդ.) տիրապետող է դառնում եզակի 3-րդ դեմքի -ույց վերջավորությունը, ինչպես՝ բանացուց (ԶԱՕ, էջ 124), բուրդացուց (ն. տ., էջ 140) և այլն: Ինչպես տեսնում ենք, գրաբարի համեմատությամբ ունենք բ-ի հավելում: Երևույթը պետք է սկսված լինի հրամայականում: Հայտնի է, որ գրաբարում եզակի հրամայականում պատճառական բայերը սուր շեշտի տակ անցյալի հիմքի -ույց վերջավորության յց նշյունախումբը զցելով, ո՛վ վերջավորությամբ անսովոր ձևեր էին ունենում, ինչպես՝ զարթուցանել-զարթուց-զարթո՛ւ, հնչեցուցանել-հնչեցուց-հնչեցո՛ւ:

Մինչդեռ հայերենում եզակի հրամայականի առավել տարածված վերջավորությունն է բ, որ ունենում են առավելապես կրավորած լինի գրաբարի պատճառականի հրամայականի արտասովոր ձևերի վրա: Եվ իրոք, միջին հայերենի առաջին շրջանի գործերից «Ջերմանց մխիթարության» մեջ գտնում

ենք նման ձևեր. «Եւ հետ այնոր զբնութիւնն կակրացո՛ւր թմրհնդով և սրբրն-
ճուպինով: Ապա թէ բնութիւնն խիստ կակուղ լինի... զստամոքսն զօրացո՛ւր
նոան ջրով» (ՄՀՁՄ, էջ 25): «Եւ այլ պղրղատունի կաթ և դարի լուացած ցա-
մաքեցո՛ւր և ապա կերցո՛ւր» (ն. տ., էջ 41) և այլն: Այսպես նաև հետադա-
յում՝ իմացո՛ւր, ուրախացո՛ւր, իմացո՛ւր (նՀ, էջ 180):

Այսօր էլ արևմտահայ գրականը այսպես է կազմում պատճառականի
հրամայականը, ինչպես՝ «Ավելցո՛ւր ասոր վրա պահանջկոտ մեծամտություն
մը» (ԳԶ, էջ 129): «—Օհանճանիս հարցո՛ւր,—կը պատասխանե ինձի» (ն. տ.,
էջ 132): Այլև՝ կաղնիացո՛ւր (ԴՎ, էջ 267), հեռացո՛ւր (ն. տ., էջ 179) և այլն:
Սակայն երևույթը այստեղ կանգ չառաւ, հրամայականից թափանցելով
անցյալի հիմքի մեջ, արեւելահայ գրականում ձևացրեց —ցը հնչյունախումբը,
ինչպես՝ զարմացնել—զարմացը, աշխատեցնել—աշխատեցը, փախցնել—փախցը
և այլն՝ պատճառ դառնալով պատճառականի անցյալ կատարյալի նոր դրսե-
վորումների.

Արեւելահայ գրական
փախցրի փախցրինք
փախցրիր փախցրիք
փախցրեց փախցրին

Արևմտահայ գրական
փախցուցի փախցուցինք
փախցուցիր փախցուցիք
փախցուց փախցուցին

Արեւելահայ գրականի այս ձևերը լայն շափով կիրառվում էին նրա կազ-
մավորումից սկսած: «Եւ ցած իջաւ բազմոցից, մոտեցաւ վրանի վարա-
գույրին, ուշիկ կերպով բարձրացրեց նրա եզրը (ն. տ., էջ 200): «Եւ ծառաներ
շատ ունեի, հայր,— ասաց Սամվելը հարկադրված ծիծաղով,— բայց մեծ
մասը ճանապարհին կորցրի» (ն. տ., էջ 431): Իսկ Սուրաբանի մոտ զործած-
ված ենք գտնում երկու ձևերն էլ. «...այդ դեպքը մինչև անգամ չստուգեց
Աշոտին (Մ, էջ 52): «Այո՛, Սեորդյաց սրիորդը ամուսնացրեց Յիկ-Ամրամի
հետ (ն. տ., էջ 58), բայց և՛ «...հարգմանս վանքերում ուսումը ծաղկեցուց»
(ն. տ., էջ 37): Մինչդեռ արևմտահայ գրականը ավելի ավանդադարձ մնաց.
«Այս եղաւ ահա մեր բարեկամութեան սկիզբը. այդ ավագանը մեր ճակատ-
ները միացուց, ու կաթիլ մը ջուրը հալեցուց մեզ իրարմէ բաժնող սա-
ռույցն պատնէշը» (ԳԶ, էջ 153):

Ժամ է որ ձեռքն իր սնունդն
Առնե միակ այն ալեկն,
Որ դարերով դիեցուց
Մեր մարտիկներն անհաճանջ (ՎՎՄ, էջ 125):

Անցյալ կատարյալում նման ձևով են խոնարհվում արևմտահայերենում
նաև անցրենել (<անցուցանել), դարձնել, կորսնցնել, որոնք թեև պատճա-
ռական կազմություններ են, բայց չեն դիտակցվում, ինչպես նաև ե խո-
նարհման ածանցավոր 3 բայ՝ հարցնել, գուցենել, լեցնել:

Ավելին. արևմտահայ գրականում տուածին պատճառական բայերի
անցյալ կատարյալի եղակի 3-րդ դեմքի ձևերը ճիշտ ու ճիշտ նման են գրա-
բարին, ինչպես՝ «Հաշտվեցաւ ինքս, և զոհողութեանս մեծութեանը ճանչնա-

լով՝ ավելի մեծ զոհողությամբ մը փոխարենը հատույց» (ԳՁ, էջ 101):
«...Ինչպես մահազդը ծանույց» (ն. տ., էջ 175):

Մովի՝ Վենետիկ, փառապանք Տիկին,
Ձոր Իտալիան գինիով սրնույց (ԴՎ, էջ 243):

Նման ձևեր հանդիպում են նաև անցյալ դարի արևելահայ գրողների մոտ. «Դրանիկներից մեկը մոտեցավ, առեց ծրարը և մատույց օրհորդին» (Բ, էջ 195):

Ըստ Հ. Բաղանձյանի, այսպես են խոնարհվում ծանուցանել, կառուցանել, հատուցանել, մատուցանել, սնուցանել (ՀԳՆՔԱՀ, էջ 195): Բացառությամբ կառուցանել ձևի, բոլորն էլ զրաբարյան պատճառական կազմություններ, որոնք, սակայն, արևմտահայերենում պարզապես ներգործական սեռի բայեր են:

Ձգալի փոփոխությունների ենթարկվեցին նաև զրաբարի անկանոն բայերի անցյալ կատարյալի արտահայտությունները:

1. Միջին հայերենում գործածությունից դուրս եկավ յանցանել բայը:

2. Միջին հայերենի առաջին շրջանում թեև տեղ-տեղ հանդիպում են յառնել բայի անցյալ կատարյալի ձևերը (հարեալ—ՀԵ, էջ 150, յարեալ—ՎԱԱ, էջ 293) և այլն, սակայն, թվում է, ավելի շուտ որպես զրաբարաբանություն: Միջին հայերենի երկրորդ շրջանում յառնել բայի զրաբարյան կանոնավոր կիրառություններ չեն հանդիպում, իսկ աշխարհաբարում յառնել վերածվեց և խոնարհման կանոնավոր բայի: Մալխասյանցը յառնել դեռևս դիտում է որպես զրաբար բառ՝ անցյալ կատարյալի համար տալով յարեալ ձևը (ՍՄՀԲԲ, հ. 3, էջ 331): Անշուշտ, հնաբանություն է վաճան Տերյանի մոտ հանդիպող հարյավ ձևը:

Հարյավ հոգին իմ որբ,
Հավետ հարյավ... (ՎՏ, էջ 324):

3. Մեղանչել, նանաչել բայերը թեև կիլիկյան շրջանում դեռ ունեն զրաբարաձև անցյալ կատարյալի կազմություններ (մեղաբ—ՎԱԱ, էջ 82, մեղալ—ՀԵ, էջ 211, ծանեալ—ն. տ., էջ 237), սակայն առաջինի մեղանչել է (ԿԵ, էջ 17?) վաղակատարի ձևը, իսկ երկրորդի նանաչեց ձևով (ՎԱԱ, էջ 123) կիրառությունը ցույց են տալիս, որ մեղանչել, նանաչել այլևս չեն դիտակցվում որպես անկանոն բայ: Արևելահայ գրականում նանաչել անցյալ և խոնարհման կանոնավոր բայերի տակ (ճանաչեց, ճանաչի՛ր), իսկ արևմտահայ գրականում՝ Ա խոնարհման ածանցավոր բայերի տակ՝ նանչնալ (որ միջին հայերենում կերպավորված ձև է). ինչպես՝ «Հետո ավելի ուժգին ձայն մը, զոր Սահակ նանչցավ...» (ԳՁ, էջ 29):

4. Այսպես նաև ըմպել բայն սկսեց օգտագործվել ի՛ր անցյալ կատարյալի ձևով՝ ըմպեց (ՎԱԱ, էջ 125): Այսօր մեր լեզվի երկու հատվածներում էլ ըմպել կանոնավոր բայ է:

5. Ունել թեև դեռ հասուկենտ ունի կալալ (ՎԱԱ, էջ 58) արտահայտությունը, սակայն աշխարհաբարի շրջանում դադարեց անցյալի հիմքի կալ արմատով օգտագործվելուց:

Արեւելահայ խոսակցականում գրաբարի կալ(ն)ուլ բայից ունենք վեր կալել հարադրությունը. անցյալ կատարյալ՝ վեր կալա կամ վեր կալեցի:

6. Ունել աշխարհարարում պակասավոր բայ է, որ օգտագործվում է գրաբարածե ներկա-անցյալ անկատարով (արեւելահայերեն՝ ունեմ, ունել. արեւմտահայերեն՝ ունիմ, ունէի ձևերով):

7. Դեռես նախամիջինհայերենյան շրջանում գործածությունից գրեթե դուրս էր եկել երբալ բայի չոգայ ձևը: Աշխարհարարի շրջանում երբալ բայի անցյալ կատարյալը կազմվում է իր հոմանիշ գնալ բայից. գնացի, գնացիր, գնաց... արեւմտահայ դրականում, թեև ոչ որպես գրական ձևեր, ունենք նաև՝ գացի, գացիր, գացց, գացինք, գացիք, գացին (Պատգիւ, հեռացար, այլես չկաս... (ՎՎՄ, էջ 22):

8. Լսել բայի անցյալ կատարյալը որպես գրաբարաբանություն միջին հայերենի 1-ին շրջանում ունենք լուայ (ՀԵ, էջ 210) ձևով, սակայն արդեն տարածված ձևեր են լսեցի (ն. տ., էջ 156), լսեցին (ՍԳԴ, էջ 43, — ՎԱԱ, էջ 124) և այլն: Միջին հայերենի երկրորդ շրջանում իսկ լսել արդեն Ս խոնարհման կանոնավոր բայ է (լսեցին—ՄՆ, էջ 105, լսեցի—ԱԱԱԱ, էջ 342): Նույնիսկ հրամայականն ունի լսէ՛ (ՀԺՏ, էջ 103, — ՆԲԴ, էջ 59, 92), լսեցէ՛ք (ԳԱ, էջ 279) ձևերը:

9. Դալ, տալ, դնել միջին հայերենում որոշ իմաստով նույնանման փոփոխությունների ենթարկվեցին՝ եղակի 3-րդ դեմքում ստանալով երեկ, երեւ, երեզ ձևերը: Աճառյանը հավանական է գտնում Կարստի տված հետևյալ բացատրությունը. գալ, տալ, դնել բառերի անցյալ կատարյալի եղակի 3-րդ դեմքի եկն, ետ, եզ ձևերը միջին հայերենում հնչվում էին yeg, yed, yet. Իբրև բաղաձայնով սկսվող բառեր, նախահավելված և ստանալով պիտի արտասանվեին եյեկ, եյետ, եյեզ: Բայց բառասկզբում եյ հնչյունակապակցությունը հայերենում անսովոր է, ուստի սրանք վերածվեցին դարձան եղեկ, եղետ, եղեզ (ՀԱԼԲ, հ. IV Ա, էջ 407):

Ինչպես հատուկ է արեւելյան որոշ լեզուների, հայերենում ևս յառնել գալ հարադիր էին օգտագործվում: Այս հարադրության հրամայականը պիտի լիներ արե՛կ, ե՛կ, ինչպես որ ունի Վ. Սյուեկցին (ՎԱԱ, էջ 144), իսկ աղա՛ արե՛կ (ՖրԴ, էջ 284, — ՎԱԱ, էջ 112 և այլն):

Ըստ Կարստի, այս արե՛կ ձևը, ազդելով գալ բայի եղեկ ձևի վրա, այն դարձրեց երեկ, որը և եղետ, եղեզ ձևերը դարձրեց երետ, երեզ (ՀԱԼԲ, հ. IV Ա, նույն տեղում): Թվում է, եղեկ, եղետ, եղեզ միջանկյալ ձևեր ենթադրել պետք չէ, մանավանդ որ միջին հայերենի շրջանից չեն վկայված. արե՛կ ձևը ուղղակի եյեկ, եյետ, եյեզ ձևերի վրա ազդելով յ>բ հնչյունափոխությամբ, կարող էր առաջացնել երեկ, երետ, երեզ ձևերը:

Միջին հայերենում գալ, տալ անցյալ կատարյալի եղակի 3-րդ դեմքում ունեին նաև եկաւ, տուաւ, որոնց ազդեցությամբ կազմվեց և յրաւ: Քանի որ այս վերջավորություններն ընդհանրապես հարապատ էին միջին հայերենի խոնարհմանը (հմմտ. հաւաւ, գաւաւ և այլն), վերեի ձևերի հետ մրցության մեջ հաղթող դուրս եկան: Այսպիսով, միջին հայերենում վերահիշյալ 3 բայերն անցյալ կատարյալում ունեցան հետևյալ ձևերը.

ա) գալ—եկի, եկիր, եկ (երեկ, եկաւ), եկար, եկիք, եկին.

բ) տալ—տուի, տուիր, ետ (երետ, տուաւ), տուար, տուիք, տուին.

գ) զնել—զրի, գրիբ, ևդիր (երեղ, դրաւ), զրինք, զրիք, զրին:

Վերևի տարածված ձևերի հետ միաժամանակ մերթրնդմերթ հանդիպում են նաև գրաբարյան ձևեր, ինչպես՝ եղ (ՍԳԴ, էջ 29), եղաք (ՄՀԶՄ, էջ 77) և այլն:

Արեւմտահայ գրականում դնել, տալ անցյալ կատարյալում միատեսակ վերջավորություններ ունեն. դրի, դրիբ, դրաւ, դրինք, դրիք, դրին.— տուի, տուիբ, տուաւ, տուինք, տուիք, տուին (ԱԱՔՔ, էջ 66—67):

Գալ բայը և՛ արեւելահայ, և՛ արեւմտահայ գրականում ունի եկա, եկաք, եկալ, եկանք, եկաք, եկաք միաձև գրականություններ:

10. Ուտել, լինել անկանոն բայերի անցյալ կատարյալը միջին հայերենից սկսած ուներ կերալ, կերաւ, կերաւ...— եղալ, եղաւ, եղաւ ձևերը, որոնք և պահպանվեցին արեւելահայ և արեւմտահայ գրականներում:

11. Գրաբարում անկանոն էր և տանիմ բայը, որ անցյալ կատարյալում ունենում էր տաւալ, տաւաք, տաւաւ, տաւաք, տաւալք, տաւաք ձևերը: Միջին հայերենում ևս պահպանվեցին այս ձևերը՝ և նույնությամբ անցան արեւելահայ գրականին: Արեւմտահայ գրականում բայիս անցյալ կատարյալը լինում է՝ տաւի, տաւիբ, տաւաւ, տաւինք, տաւիք, տաւին:

12. Հետաքրքրական փոփոխությունների ենթարկվեց առնել բայը: Ինչպես հայտնի է, սա գրաբարում միակ բայն է, որ անցյալի հիմքը կազմում է կրկնությամբ՝ առնել—ար+ար>արար: Սա հնդեվրոպական կրկնավոր բնի մի գեղեցիկ արտահայտություն է հայերենում:

Հնիւ. բայական բնի կազմության այս ձևը պահպանվել է արիական լեզուներում և հունարենում:

Միջին հայերենում անորոշ դերբայի ալւնել, ալնել, առնել հնչյունափոխված ձևերին համապատասխան փոխվեց նաև անցյալ կատարյալի արտահայտությունը, որ հիմնականում ուներ հետևյալ ձևերը՝ ա(յ)րի, ա(յ)րիբ, աւաւ, ա(յ)րաւ, ա(յ)րիք, ա(յ)րին, իսկ միջին հայերենի երկրորդ շրջանում ունենք արի (նշ, էջ 37,—նՔԴ, էջ 58), արեց (նշ, էջ 25), աւաւ (նՔԴ, էջ 44, 60) ձևերը: Այսինքն՝ հիմքի կրկնավոր կազմության բաժանումը կորավ:

Արեւելահայ գրականում առնել բայի անցյալ կատարյալի բուն ձևերն են՝ արի, արիբ, աւալ նաև՝ արեց), արինք, արիք, արին. թեև Ս խոնարհման պարզ բայերի ազդեցությամբ գործածական են նաև արեցի, արեցիբ, արեց, արեցինք, արեցիք, արեցին ձևերը: Արեւմտահայ գրականում բայիս անորոշ ձևն է ընել, որին համապատասխան և անցյալ կատարյալն ունի՝ ըրի, ըրիբ, ըրաւ, ըրինք, ըրիք, ըրին ձևերը, ինչպես.

երեքն երեք ուխտեր ըրին

Առջևն երեք բազիններուն (ԴՎ, էջ 220):

Այս բոլորից դուրս, գրաբարի անցյալ կատարյալի կազմության ժամանակ հանդես էին գալիս նաև այլ դարձուղություններ.

ա) Ն խոնարհման պարզ բայերից ածել, բերել, հանել, անցյալի հիմքը կազմելով ածանցավոր բայերի նման, անցյալ կատարյալում ունենում էին ածի, բերի, հանի... ձևերը: Միջին հայերենի շրջանում այս բայերի անցյալ կատարյալը հանդիպում է և՛ արմատական հիմքով, և՛ ց բաղադրիչով, ինչ-

պես՝ ածին (ՍԳԴ, էջ 29,— ՆՔԴ, էջ 92), Երեւ (ՀԵ, էջ 194,— ՀԹՏ, էջ 191), բերիւ (ՆՀ, էջ 112): Սակայն և՛ «Հանեցին զիս յիմ այգոյս» (ԳԱ, էջ 280):

Արեւելահայ և արեւմտահայ գրականում հանել, ածել և պարզ խոնարհման կանոնավոր բայեր են, իսկ բերել թե՛ արեւելահայ և թե՛ արեւմտահայ գրականում անկանոն խոնարհման բայ է, ունենում է՝ բերի, բերիւ, բերավ (արեւելահայ գրականում՝ նաև բերեց), բերին, բերիք, բերին ձեռքը: Արեւելահայ գրականում երկրորդաբար ունենք նաև բերեցի, բերեցիր, բերեց, բերեցին, բերեցիք, բերեցին ձեռքը:

բ) և պարզ խոնարհման ասել, գիտել, կարել, մարթել, մասամբ և՛ մերկել բայերը գրաբարում անցյալի հիմքում Ա պարզ խոնարհման բայերի ձևեր են ունենում՝ ասաց, գիտաց, կարաց, մարթաց, մերկաց: Մարթել, մերկել շատ վաղ գործածությունից դուրս եկան: Այդ բայերը աշխարհաբարում փոխարինված են իրենց հոմանիշներով: Կարել միջին հայերենում օգտագործված է՝ «կարացաք» (ՍԳԴ, էջ 81), «կարացի (ն. տ., էջ 24): Խոսակցական արեւելահայերենում կարալ ձևով բացի պահում է իր գոյությունը՝ կարում եւ, կարացի, իսկ արեւմտահայ գրականում կարենալ > կրնալ ձևով է հանդես գալիս, որ խոնարհվում է Ա խոնարհման ածանցավոր բայերի նման. ինչպես՝ «Ո՛չ, չկրցավ ըսել» (ԳԶ, էջ 85): Գիտել ևս միջին հայերենում գրաբարաձև գրսեորումներ ունի, ինչպես՝ գիտաց (ՍԳԴ, էջ 74): Աշխարհաբարում ունի ներկա և անցյալի անկատար ձևերը՝ գիտեմ, գիտես..., մյուս ձևերը արեւելահայերենում լրացվում են գիտենալ բայով, իսկ արեւմտահայ գրականում՝ գիտնալ բայով, որ Ա խոնարհման ածանցավոր բայ է՝ գիտցա, գիտցար, գիտցավ, գիտցանք, գիտցաք, գիտցանք. ինչպես՝

Դուն որ գիտցար զիս վտանգել, ազատե՛ արդ շուտափույթ (ԴՎ, էջ 279):

Անցյալ կատարյալում հարուստ գրսեորումներ ունի ասել բայը: Միջին հայերենի առաջին շրջանում գրաբարյան ասացաք (ՄՀԶՄ, էջ 3), ասացին (ԳՔ, էջ 10) ձևերի կողքին ունենք նաև կանոնավոր ասեաց, այլև բարբառային ասի ձևով, ինչպես՝ «Եւ պատուիրեաց մկանցն և ասեաց» (ՎԱԱ, էջ 64), «Յոր մի չաւի. թէ Տէր մեղայ» (ՀԵ, էջ 170), իսկ երկրորդ շրջանում թեև կան գրաբարաձև գործածություններ՝ ասաց (ՄՂ, էջ 111,— ՆՔԴ, էջ 44 և այլն), սակայն ավելի տարածված են բարբառային ձևերը. ասիր (ՄՂ, էջ 95, 99), ասին (ՆՔԴ, էջ 88), ասաւ (ԶԱԾ, էջ 70, 100) և այլն: Այս ձևերը պահպանվեցին նաև XIX դարի արեւելահայ գրականում: Նույնիսկ Վ. Տերյանն ունի ասի.

Դահճիս կանգնած տեսա

Ասի՝ արերս առ... (ՎՏ, էջ 251):

Արեւմտահայ գրականում անորոշ զերբայի ըսել ձևին համապատասխան բայս ունենում է ըսի, ըսիր, ըսաւ, ըսինք, ըսիք, ըսին ձեռքը, ինչպես՝

Երեցն ըսավ. «Դիք կայծակի,

Քեզ կը ձոնեմ մաղերս ոսկի (ԴՎ, էջ 220):

Արեւելահայ գրականում ընտիր են գրաբարյան ասացի, ասացիր... ձևերը, զուգահեռ օգտագործվում են նաև ասեցի, ասեցիր, ասեց... կանոնա-

վորված ձևերը, այլև ասի, ասիւ, ասեց երբեմն՝ ասալ), ասինք, ասիք, ասիւն, որոնք ավելի շուտ խոսակցական-բարբառային են:

դ) Նստել, որ դրաբարում է խոնարհման պարզ բայ է, անցյալի հիմքում ունի նիստ, իսկ կատարյալում՝ նստալ, նստար, նստաւ... Ե՛վ Ա. Այտրնյանը, և՛ Հ. Գաղանձյանը արեւմտահայերենի համար դրաբարյան ձևերն են ձիշտ համարում, թեև ունենք նաև նստեցա, նստեցար...: Արեւելահայ դրականում նստել կանոնավոր բայ է:

դ) Ինչպես հայտնի է, առնել (< առնուլ) անցյալ կատարյալում սպասվող առալ, առար, առաւ կրավորաձև վերջավորությունների փոխարեն դրաբարում ունենում էր առի, առեր, Լառ... Այս ձևերն օգտագործվում էին նաև միջին հայերենում, ինչպես՝ «Բէ պահես զիմ պատուիրանն, որ առեր յինէն» (ՀԵ, էջ 209) «Ապա անուանեցին զայս ժամանակս ի պակասն, զի իւր գործոյն առին և զիւր անուն» (ՄՀՁՄ, էջ 135): Ա. Այտրնյանը և Հ. Գաղանձյանը այս բայը համարում են անկանոն և կատարյալի համար դնում են առի, առիւ, առալ, առինք, առիք, առին ձևերը, որոնք օգտագործված ենք գտնում արեւմտահայ գրողների մոտ. առիւ (ԳՁ, էջ 98, — ՎՎՄ, էջ 120), առալ (ԴՎ, էջ 248): Արեւելահայ դրականում առնել անցյալ կատարյալում Ա խոնարհման ածանցավոր բայերի պես է խոնարհվում՝ առա, առար, առալ, առանք, առաք, առան: Անցյալ դարի արեւելահայ գրողների լեզվում օգտագործված է նաև առեց (Բ, էջ 248, 276), առեցին (Ն. տ., էջ 255) ձևով:

ե) Զարկել (արեւմտահայերենում՝ զարնել), լալ մեր դրական լեզվի երկու հատվածներում էլ անցյալ կատարյալում ունեն զարկի, զարկիւ, զարկալ (արեւելահայերեն՝ նաև զարկեց), զարկինք, զարկիք, զարկին, — լացի, լացիւ, լացալ (արեւելահայերեն՝ նաև լացեց) ձևերը: Ե պարզ խոնարհման բայերի նմանողությամբ արեւելահայ դրականում կան նաև զարկեցի, զարկեցիւ, զարկեց... լացեցի, լացեցիւ, լացեց... ձևերով:

զ) Գրաբարի անկանխի բայը արեւմտահայ դրականում անորոշում թեև ունի իյնալ ձևը, սակայն անցյալ կատարյալում ունենք ինկա, ինկար, ինկալ... ձևերը:

Գրաբարի անցյալ կատարյալում գրսեորվող զարտուղություններն, անշուշտ, սրանցով չեն սահմանափակվում: Գրաբարի քերականներն այդ բոլորը խնամքով քննել, հավաքել են: Մենք քննեցինք այն բայերը, որոնք մեր լեզվի տարբեր գրսեորումներում ևս արտահայտություններ ունեն:

ՀԱՄԱՐԱՌՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԱԱԱԱ — Ամիրզոյաթի Ամասիացոյ Անդիտաց անպէտ կամ բառարան բժշկական նիւթոց, ի լոյս էած հանդերձ ծանոթագրութեամբ Կ. Յ. Բասմաշեան, Վիեննա, 1926:

ԱԱԲԲ — Արսեն Այտրնյան, Քննական բերականություն աշխարհարար կամ արդի հայերեն լեզվի, Վիեննա, 1866:

ԴԱ — Դրիգոր Աղթամարցի, Ուսումնասիրություն, քննական բնագրեր և ծանոթագրություններ Մ. Ավդալբեկյանի, Երևան, 1963:

ԳՁ — Դրիգոր Զոհրապ, Նովելներ, Երևան, 1954:

ԴԲ — Դրիգորիս, Քննություն բնութեան մարդոյ և նորին ցաւոց, աշխատասիրութեամբ Ա. Ս. Կոնյանի, Երևան, 1962:

ՎՎ — Վանիկ Վարուժան, Բանաստեղծություններ, Երևան, 1955:

ՁԱՅ — Ձաքարիա Աղուլեցի, Օրագրություն, Երևան, 1938:

ԿԵ — Կոստանդին Երզնկացի, Տաղեր, աշխատասիրութեամբ Ա. Նրապյանի, Երևան, 1962:

- ՀԱԼՔ—Հրաչյա Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների, հատ. IV, Ա, Երևան, 1959:
- ՀՐԱՀԽՏ—Հովհաննես Բարսեղյան, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Երևան, 1953:
- ՀԳՆՔԱՀ—Հովհաննես Գազանճյան, Նոր քերականություն արդի հայերեն լեզվի, Կ. Պոլիս, 1924:
- ՀԵ—Հովհաննես Երզնկացի, Ուսումնասիրություն և բնագրեր, աշխատասիրությամբ Ա. Սրապյանի, Երևան, 1958:
- ՀԹՏ—Հովհաննես Թլկուրանցի, Տաղեր, աշխատասիրությամբ էմ. Պիվադյանի, Երևան, 1960:
- Մ.—Մուրացան, Երկերի ժողովածու, հատ. 4, Երևան, 1963:
- ՄԱՀԼՏ—Մանուկ Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965:
- ՄՀՋՄ—Մխիթար Հերացի, Ջերմանց մխիթարություն, Վիեննա, 1832:
- ՄՂ—Մարտիրոս Ղրիմեցի, Ուսումնասիրություն և բնագրեր, աշխատասիրությամբ Ա. Մարտիրոսյանի, 1958:
- Յայտն.—Յայտնություն Յովհաննու (Նոր կտակարան):
- ՆՀ—Նաղաշ Հովնաթան, Բանաստեղծություններ, Երևան, 1957:
- ՆՇԲԶ—Ներսէս Շնորհալի, Բանբ չափաւ, Վենետիկ, 1830:
- ՆՔԴ—Նահապետ Քուչակ, Դիւան, աշխատասիրությամբ Ա. Զաւյանեանի, Փարիզ, 1902:
- ՍԳԴ—Սմբատ Գունդստապլ, Դատաստանագիրք, աշխատասիրութեամբ Հ. Ղյուճեանի, Էջմիածին, 1918:
- ՍՄՀԲԲ—Ստեփանոս Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հատ. 3, Երևան, 1944—1946:
- ՎԱԱ—Ժողովածոյք առական Վարդանայ, մասն Բ, բնագիր, աշխատասիրութեամբ Ն. Մանի, Ս. Պետերբուրգ, 1894:
- ՎՎՄ—Վահէ-Վահեան, Մատեն սիրոյ և մորմորի, Պէլյուսթ, 1968:
- ՎՏ—Վահան Տերյան, Բանաստեղծությունների լիակատար ժողովածու, Երևան, 1940:
- Բ.—Բաֆֆի, Երկերի ժողովածու, հատ. 7, Երևան, 1963:
- ՅՐԴ—Յրիկ, Դիւան, ի լոյս բնծայեց Տիրայր Թրք., Նիւ-Նորք, 1952:

ИСТОРИЧЕСКИЕ ИЗМЕНЕНИЯ АРМЯНСКОГО АОРИСТА

С. М. АНТОСЯН

(Резюме)

Аорист древнеармянского языка (грабара) имел и активную, и пассивную флексию, но формы пассивной флексии не во всех случаях предполагали пассивность. Расширенные основы (основы, образованные суффиксами) на *h*, *u*, *li*, независимо от залога, спрягались на пассивном парадигме.

В среднеармянском, где пассивность стала выражаться частицей *ni>ch*, которая приставлялась к основе спрягаемого глагола, исчезла необходимость специальных пассивных парадигм.

В процессе дальнейшего развития языка пассивные окончания древнеармянского аориста в восточном и западном армянском литературных языках стали окончаниями для всех расширенных основ соответствующих времен.

Что касается древнеармянского аориста первичных основ с флексиями *h*, *u*, то он, унифицируясь в парадигме, и по форме, и по содержанию в основном сохранился и в среднеармянском, и в современных двух армянских литературных языках (ср. грабар — *սիրեցի*, *սիրեցեր*, *սիրեաց*, *սիրեցաք*, *սիրեցէք*, *սիրեցին*, ашхарабар — *սիրեցի*, *սիրեցիր*, *սիրեց*, *սիրեցինք*, *սիրեցիք*, *սիրեցին*).